ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունվարի 2014թ. թիվ 05 –Ա

Իրավունքը հաստատող փաստաթղթերը չունեցող բնակելի տների , օժանդակ շինությունների և ինքնակամ զբաղեցրած տնամերձ հողամասի կարգավիճակի մասին.

Հարգելով Սարամեջ համայնքի բնակիչ Արգինա և Բագրատ Հարոյանների 03.02.2014թ. դիմում այն մասին , որ Սարամեջ համայնքում 0087-003 ծածկագրի տակ գտնվող 0.039հա սեփականության իրավունքով իրենց պատկանող տնամերձ հողամասի վրա 2007թ. պետական աջակցության ծրագրով կառուցվել է 81.0քմ մակերեսով բնակելի տուն:

Մինչև բնակելի տան կառուցումը 1993թ. կառուցվել է օժանդակ շինություններ՝անասնագոմեր , որոնք թյուրիմացաբար առաջին պետական գրանցման ժամանակ գրանցում չեն ստացել:< Գուգարաց աշխարհ>ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծով տնամերձ հողամասի ընդհանուր մակերեսը հաշվառվել է 0.0415հա այսինքն տեղի է ունեցել 0.0025հա հողամասի ինքնակամ զավթում , որի վրա կառուցվել է բնակելի տան որոշակի մասը:

Նկատի ունենալով , որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները , և օրենքով պահանջվող շահերը , վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ,չեն գտնվում հողային օրենսգրքով նախատեսված 60-րդ հոդվածի ցանկում , ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավունքը հաստատող փաստաթղթերը չհրապարակված անհատական բնակելի տների 10.06.2008թ. 27.04.2010թ. ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության 1004 որոշմամբ և ինքնակամ զբաղեցրած տնամերձ հողամասի կարգավիճակի մասին 26.12.2002թ. օրենքի , <Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին> օրենքի 29 հոդվածի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով <Գուգարաց աշխարհ> ՍՊԸ –ի կողմից կազմված հատակագիծը.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1, Օրենքի ուժով ճանաչել Արգինա և Բագրատ Հարոյանների սեփականության իրավունքը Սարամեջ համայնքում 0087-0003 ծածկագրի տակ գտնվող 0.04152հա տնամերձ հողամասի և նրա վրա կառուցված 81.0քմ մակերեսով բնակելի տան և օժանդակ շինությունների՝19.5քմ ընդհանուր մակերեսով անասնագոմերի նկատմամբ:

2.Դադարեցնել 23.01.2014թ. թիվ 04-Ա որոշմամբ առաջադրված գործողությունները:

3.Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը որպես հիմք վերը նշված հողամասին և շենք շինություններին պետական գրանցում տալու համար:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից

Սարամեջ համայնքի ղեկավար՝ Հ.Հովհաննիսյան